

**ՀՐԱՆՏ ՀԱԿՈՒԲՅԱՆԸ՝
ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ**



ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈՒՅԱՆ

Մերօրյա հերոս է փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանը, ով 1993 թվականին հիմնադրել է Գավառի պետական համալսարանը:

Հրանտ Հակոբյանը ծնվել է 1927 թվականի դեկտեմբերի 17-ին, գերազանց առաջադիմությամբ ավարտել է միջնակարգ դպրոցը, սովորել է Գավառի մանկավարժական տեխնիկումը: Այնուհետ կրթությունը շարունակել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Երկու տարվա ընթացքում, գերազանցությամբ ավարտել է ինստիտուտը: Ապա ընդունվել է մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ և գերազանցությամբ, էքստենս կարգով ավարտել այն: Միաժամանակ սովորել և ավարտել է նույն բուհի ասպիրանտուրան՝ փիլիսոփայություն մասնագիտությամբ:

1964 թվականից որպես դասախոս աշխատել է Երևանի Կառլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, ապա ընտրվել է Երևանի պետական համալսարանի աթեիզմի տեսության և պատմության միջբուհական ամբիոնի վարիչ: Նրա նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ ԵՊՀ գիտական խորհուրդը վերանայել է ուսումնական պլանները և համալսարանում սկսել են դասավանդել ոչ թե աթեիզմի տեսություն, այլ «Կրոնների պատմություն և տեսություն» առարկան, ինչն այդ ժամանակի համար բացառիկ խիզախ քայլ էր: Հրանտ Հակոբյանը ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի բացմանը և շուրջ մեկ տասնամյակ ղեկավարել է Կրոնի պատմության և տեսության ամբիոնը:

ԽՍՀՄ փլուզումից հետո, նորանկախ երկրում տիրող սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում խիստ դժվարացել էր հեռավոր շրջաններից մայրաքաղաք հասնելը, Երևանում բնակվելը և բարձրագույն կրթություն ստանալը: Այդ ծանր ժամանակահատվածում Հրանտ Հակոբյանը նախաձեռնեց Գավառում բուհ ստեղծելու հայրենանվեր գործը, և նրա ջանքերով ու ՀՀ Կառավարության որոշմամբ 1993 թվականին հիմնադրվեց Գավառի պետական համալսարանը, որի հիմնադիր ռեկտոր նշանակվեց պրոֆեսոր Հակոբյանը: Համալսարանը գրեթե 30 տարվա ընթացքում Գավառի տարածաշրջանի և Հայաստանի Հանրապետության համար պատրաստել է

8000-ից ավելի մասնագետներ: Նրանց մի մասն այսօր ապրում և աշխատում է Ռուսաստանի Դաշնությունում:

Հրանտ Հակոբյանը իր ողջ ուժերը, եռանդը, մանկավարժական, կազմակերպչական փորձն ու գիտելիքները ներդրեց համալսարանի կայացման, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման և ժամանակակից ուսումնական հաստատություն ձևավորելու գործին:

Բազմամյա արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի համար պրոֆեսոր Հակոբյանն արժանացել է բազմաթիվ պարգևների, պատվոգրերի և մեդալների: 1987 թվականին պարգևատրվել է «ԽՍՀՄ աշխատանքի վետերան» մեդալով, ապա արժանացել ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի, Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալի, մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե մեդալի: 2008 թվականին ստացել է Քեմբրիջի միջազգային կենսագրությունների կենտրոնի հուշամեդալը, իսկ 2010 թվականին ՀՀ Նախագահի հրամանագրով ստացել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչում: Պարոն Հակոբյանի գիտամանկավարժական բեղուն գործունեության միջազգային հավաստումն է նաև այն, որ նա Քեմբրիջի միջազգային կենսագրությունների կենտրոնի կողմից ճանաչվել է «XXI դարի նշանավոր մտավորականներից» մեկը: Հրանտ Հակոբյանը Գավառի պատվավոր քաղաքացի է: Հեղինակ է մեկ տասնյակ մենագրությունների ու գրքերի, ավելի քան 100 գիտական ու հրապարակախոսական հոդվածների: Հրանտ Հակոբյանի հիմնադրած բուհում

Հրանտ Հակոբյանը պայծառ անհատականություն էր, ով 2011 թվականից դարձավ հավերժի ճամփորդ: